ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

ք. Աշտարակ **23.01. 2023թ.ժամը 14^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Հ. Գույյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Է. Փարվանյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյանը	ՀՀ մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ա. Գրիգորյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ռ. Թադևոսյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դատումյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Մ. Հովհաննիսյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ

Ուժային կառույցների ներկայացուցիչներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի նախագահությամբ կայացավ ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի հերթական նիստը: Նիստի մեկնարկին մեկ րոպե լռությամբ հարգեցին հունվարի 19-ին զինվորական կացարանում տեղի ունեցած հրդեհի հետևանքով զոհված զինծառայողների հիշատակը:

Ներկայացվեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որի վերաբերյալ առաջարկություններ չեղան և մեկնարկեց օրակարգային հարցերի քննարկումը:

Օրակարգում՝

1. Սեփական եկամուտների հավաքագրման և 2023 թվականի բյուջետային գործընթացի կազմակերպման վերաբերյալ:
2. Համայնքների վարչական սահմաններում արոտավայրերի վարձակալության տրամադրման վերաբերյալ:
3. Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման արդյունքում կադաստրային արժեքների տարբերության վճարման վերաբերյալ:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:
5. Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ:
6. Մարզում ընթացող և 2023 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:
7. Համայնքներում առկա ինքնակամ շինությունների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:

8. Այլ հարցեր:

Լսեցին՝

1. Սեփական եկամուտների հավաքագրման և 2023 թվականի բյուջետային գործընթացի կազմակերպման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյան/* :

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումն 2023 թվականին իրականացվել է 100,6 %-ով, որը բարձր ցուցանիշ է նախորդ տարվա համեմատ: Նշվեց, որ լավագույն հավաքագրման ցուցանիշ են ապահովել մարզի Աշտարակ, Թալին, Ապարան խոշորացված համայնքները, իսկ որոշակի թերացումներ կան Արևուտ և Ծաղկահովիտ համայնքներում:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանն առաջարկեց պատասխանատու ոլորտներին, համայնքների ղեկավարներին աշխատանքներ տանել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը տարեսկզբից կազմակերպելու, պլանավորելու ուղղությամբ, որպեսզի տարեվերջին հավաքագրման ծանրաբեռնվածություն չլինի:

Ն. Գալստյանը ներկայացրեց նաև 2023 թվականի բյուջետային գործընթացի հետ կապված խնդիրները, խնդրեց, որ համայնքի ղեկավարները բյուջեի կազմման ընթացքում քննարկումներ կազմակերպեն մարզպետարանի ոլորտի պատասխանատուների հետ մեթոդական աջակցություն ստանալու և հետագա բացթողումներից խուսափելու նպատակով: Նշվեց նաև, որ համայնքների միջնաժամկետ ֆինանսական ծախսային ծրագրերը ևս վերջնական ճշգրտման կարիք ունեն, մեկ անգամ ևս անհրաժեշտություն կա քննարկելու և ուղղումներ կատարելու:

2. Համայնքների վարչական սահմաններում արոտավայրերի վարձակալության տրամադրման վերաբերյալ */զեկ. հողաշինության և հողօգտագործման բաժին- ՄՀՊՏ ավագ մասնագետ Գ. Մանուկյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Գ. Մանուկյանը տեղեկացրեց, որ 2022 թվականի ընթացքում Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից կարճաժամկետ վարձակալությամբ տրամադրվել է 13550 հա 22754200 ՀՀ դրամ վարձավճարով: Կարևորեց վարձակալության պայմանագրերի ժամանակին կնքման գործընթացը և առաջարկեց համայնքների ղեկավարներին առանց պայմանագրերի կնքման վարձակալության տրամադրման գործընթացը բացառել:

3. Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման արդյունքում կադաստրային արժեքների տարբերության վճարման վերաբերյալ */զեկ. հողաշինության և հողօգտագործման բաժին- ՄՀՊՏ ավագ մասնագետ Գ. Մանուկյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2022 թվականի ընթացքում Արագածոտնի մարզի համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից սեփական նախաձեռնությամբ կատարվել է 77.892 հա սեփական հողամասերի նպատակային նշանակության

փոփոխություն: 45.999 հա հողամասերի դեպքում առկա է եղել կադաստրային արժեքների տարբերության վճարման անհրաժեշտություն:

4. ***Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ*** */ զեկուցող՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյանը ներկայացրեց 2021թ.-ից ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն մեկնարկած համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Նշվեց, որ մարզպետարանի աջակցությամբ և համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում 118 միավոր շենք-շինություններ արդեն իսկ գրանցվել և ձեռք են բերել սեփականության իրավունքի վկայականներ: 23.01.2023թ. դրությամբ մարզի համայնքներում մնացել է ընդամենը 20 միավոր գույք, որոնք դեռևս գրանցված չեն. այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

5. ***Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ*** */ զեկուցող՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*
/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը զեկուցեց, որ ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունից և մարզի համայնքների ղեկավարների կողմից ստացված տվյալների ամփոփման արդյունքում պարզվել է, որ 23.01.2023թ. դրությամբ մարզի համայնքներում առկա է ազդարարման 108 էլեկտրական շչակներ:
Մարզի ամբողջ բնակչության ազդարարման ձայնաձածկույթի ապահովման համար անհրաժեշտ են ևս 42 շչակներ:
Հաշվի առնելով գործընթացի կարևորությունը առաջարկվեց Թալին, Ապարան, Մեծաձոր, Արևուտ, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներին 2023թ. տեղական բյուջեով նախատեսել անհրաժեշտ միջոցներ էլեկտրական շչակների ձեռք բերման և տեղադրման համար, որպեսզի մինչև 2023թ. մայիս-հունիս ամիսներին աշխատանքներն ավարտին հասնեն:

6. ***Մարզում ընթացող և 2023 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ*** / զեկուցող՝ քաղաքաշինության վարչության պետ Հ. Ստեփանյան/:
/Զեկույցը կցվում է/:

Քաղաքաշինության վարչության պետը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացված համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մասին տեղեկատվություն: Զեկուցվեց նաև մարզում ավարտված, ընթացքցի մեջ գտնվող և նոր ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի մասին: Տեղի ունեցած քննարկման արդյունքում մարզպետ **Ս. Մովսիսյանը հանձնարարեց** ՏԻՄ-երից պահանջել առավել խնամքով պատրաստված և պատշաճ կազմված սուբվենցիոն ծրագրային փաթեթներ: Միաժամանակ հետևողականորեն գործի դնել մարզպետարանի մասնագիտական ողջ ներուժը, որպեսզի համայնքներից ստացված թերի սուբվենցիոն փաթեթները չներկայացվեն նախարարություն:

Մարզպետի տեղակալ Հ. Գուլյանի կողմից առաջարկվեց համայնքի ղեկավարներին դիտարկել նաև 2024 թվականի սուբվենցիոն ծրագրային հայտերը կազմելու նպատակահարմարության հարցը:

7. Համայնքներում առկա ինքնակամ շինությունների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ / զեկուցող՝ քաղաքաշինության վարչության պետ Հ. Ստեփանյան/:
/Զեկույցը կցվում է/:

2022թ.հունվարի 5-ին ՀՀ կառավարությունը ընդունեց ինքնակամ կառույցների հաշվառման կարգը սահմանելու մասին որոշումը,որով կարգավորվում է նշված կառույցների հաշվառման ընթացակարգը: Քաղաքաշինության վարչության պետ Հ. Ստեփանյանը ներկայացրեց, որ օրենքով սահմանված ժամանակահատվածում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում այլևս անհնար կլինի վերը նշված կառույցները օրինականացնել, ուստի հետագայում թյուրիմացություններից և կոնֆլիկտներից խուսափելու համար առաջարկվեց համայնքների ղեկավարներին ուշադրության կենտրոնում պահել նշված գործընթացը:

Զեկույցների ավարտից հետո մարզպետ Սերգեյ Մովսիսյանը խոսքը տրամադրեց ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արագածոտնի մարզի տարածքային ստորաբաժանման նորանշանակ ղեկավար Սուրեն Մեժլումյանին: Վերջինս ներկայացրեց ՀՀ Կառավարության որոշմամբ վարժական հավաքների անցկացման, դրանց կազմակերպան գործընթացի վերաբերյալ մի շարք խնդիրներ, խոսեց ՀՀ բոլոր զինապարտ քաղաքացիների համար առաջիկայում նախատեսվող 25-օրյա վարժանքների կարևորության մասին: Առաջարկեց, որպեսզի համայնքների և վարչական շրջանների ղեկավարները գործուն մասնակցություն ունենան ծանուցագրերը հասցեատերերին հասցնելու գործում: Բացատրական աշխատանքներ տանեն ժամանակին տարածքային կենտրոն ներկայանալու համար: Մարզպետ Ս. Մովսիսյանը ևս կարևորեց խնդիրը, առաջարկեց համայնքների ղեկավարներին հսկողության տակ պահել հարցը, անհրաժեշտության դեպքում նոր քննարկումներ կազմակերպել և մեխանիզմներ մշակել գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին արդյունավետ համատեղ աշխատանքի համար, նշեց, որ 2023 թվականը շատ ավելի արդյունավետ կլինի փոխշահավետ համագործակցության և նվիրված աշխատանքի շնորհիվ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**